

ՍԱՂՄՈՍ 10

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ամբարշտին տապալելու աղոթք <u>MT նախաբան չկա</u>	Չարի վրա Աստծո հաղթանակի վստահության երգ	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք (Սաղմոս 9-10, Ողբ) Ակրոստիկոս	Արդարության աղոթք	Աստված զարկում է ամբարշտին և փրկում խոնարհին (Սաղմոս 9-10) Ակրոստիկոսի շարունակություն 10:1-2 (<i>Լամեդ</i>)
10:1-2	10:1-2	10:1-2	10:1-2	10:1-2 (<i>Լամեդ</i>)
10:3-4	10:3-4	10:3-4	10:3-4	10:3 (<i>Մեմ</i>) 10:4 (<i>Նոն</i>)
10:5-11	10:5-7	10:5-6	10:5-7	10:5 10:6ա,բ 10:6գ-7ա 10:7բ-8ա 10:7բ-8բ (<i>Փե</i>) 10:8գ-9 (<i>Ային</i>)
10:12-15	10:12-13 10:14-15	10:12-13 10:14 10:15-16	10:12-13 10:14 10:15	10:12-13 (<i>Զոֆ</i>) 10:14 (<i>Րեշ</i>) 10:15-16 (<i>Շին</i>)
10:16-18	10:16-18	10:17-18	10:16 10:17-18	10:16 10:17-18 (<i>Թալ</i>)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 10:1-2

¹Ինչո՞ւ ես հեռու մնում, ո՞վ ՏԵՐ,

Ինչո՞ւ ես թաքնվում նեղության ժամանակ:

²Ամբարիշտն ամբարտավանությամբ հալածում է աղքատին .

Իրենց հնարած չար խորհուրդներով թող իրենք բռնվեն:

10:1 Սա տարածված հարց է հավատարիմ հավատացյալների համար այս մեղավոր՝ ընկած աշխարհում: Չարիքը և չարչարանքները հաճախ անակնկալ և չսպասված դեպքեր են: Ինչո՞ւ պետք է մեր սիրառատ, ողորմած Աստվածը թույլ տա նման բաներ:

Սուրբգրային պատասխանն չկա այս հարցին, բացի այն, որ մենք ապրում ենք անկում ապրած աշխարհում: Սա այն աշխարհը չէ, որն Աստված էր նախատեսել, և ոչ էլ այն աշխարհն է, որը լինելու է ապագայում: Որպես աստվածաբան ես պետք է սա հաստատեմ, որ Աստված թույլ է տվել, որ մենք հնձենք Ադամի/Եվայի մեղքերի և մեր անձնական որոշումների հետևանքները: Մինչդեռ նա ակտիվ կերպով գործեց մեր փրկության համար: Այս թեմայի շուրջ՝ այս աշխարհում՝ կյանքում չարի և տառապանքների մասին լավագույն գիրքը, որն իսկապես լուրջ է մոտենում այս հարցին, Ջոն Վ. Վենհեմի *Աստծո բարությունը* (John W. Wenham, *The Goodness of God*) գիրքն է:

❖ Սաղմոսերգուն երկու հատուկ հարց է ուղղում («ինչո՞ւ») Աստծո ակնհայտ բացակայության վերաբերյալ:

1. հեռու ես մնում – BDB 763, KB 840, *Qal ԱՆԿԱՏԱՐ*

2. թաքնվում ես – BDB 761, KB 834, *Qal ԱՆԿԱՏԱՐ*, տես՝ Սաղմ. 27:9, 55:1, 69:17

ՅԱՀՎԵՆ խոստացավ ներկա լինել և ներգրավված Իր ուխտի ժողովրդի կյանքում, սակայն Նա կարծես թե բացակայում է և նպատակային ակտիվ չէ (տես՝ Սաղմ. 10:5ա, 11):

Նկատե՛ք ՀՄԱ-ի պոեզիան հատուկ բառախաղերն ու գուգահեռականությունը՝ հանգավորումը (տես՝ Հատուկ Թեմա. Եբրայական պոեզիա):

Այս մեղադրանքները իրողությունն չեն, այլ շփոթված և վիրավորված հավատացյալների զգացմունքներ:

10:2 Ուշադրություն դարձրե՛ք ամբարիշտների հատկանիշներին՝

1. հպարտություն/ ամբարտավանություն – BDB 144, տես՝ Սաղմ. 31:18, 23, 36:11, 73:6

2. հալածել – BDB 196, KB 223, *Qal ԱՆԿԱՏԱՐ*, տես՝ Ծննդ. 31:36, 1 Թագ. 17:53, Ողբ 4:19

3. չար խորհուրդներ – BDB 362, KB 359, *Qal ՎԱՂԱԿԱՏԱՐ*

Սա ավելի է զարգանում հաջորդ պարբերություններում՝ տներում (Սաղմ. 10:3-4 և 5:11):

❖ «**իրենց հնարած չար խորհուրդներով թող իրենք բռնվեն**» Սա NASB-ը թարգմանել է որպես ՀԱՅՏԱԿԱՆ (BDB 1074, KB 1779, *Niphal ԱՆԿԱՏԱՐ*՝ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով), ինչպես պետք է աներ Սաղմ. 10:15բ:

Սա արտահայտում է «դերի հակադարձման» ՀԿ-յան հատուկ մոտիվ: Այն ինչ ակնկալվում էր, տեղի չի ունենում Աստծո ներկայության շնորհիվ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 10:3-4

³Քանի որ ամբարիշտը պարծենում է իր սրտի ցանկություններով,

Եվ երանի է տալիս ուրիշի ունեցվածքը ցանկացողին,

Ումից ՏԵՐԸ նողկում է:

⁴Ամբարիշտն իր ամբարտավության պատճառով Աստծուն չի փնտրում .

Նրա մտքում ամենևին Աստված չկա:

10:3-4 Այս պարբերությունը շարունակում է նկարագրել (1) հեթանոսներին, (2) աթեիստներին, կամ առնվազն (3) սաղմոսերգուի թշնամիների (այսինքն՝ այլ իսրայելացիների) «գործնական աթեիզմը»:

1. անիծում է ՏԻՐՈՋԸ – միայն մի քանի անգամ է «անիծելու» իմաստով (բառ.՝ «օրհնել», BDB 138, KB 159, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ 3 Թագ. 21:10, 13, Հոր 1:5, 2:9):
2. արհամարհում է ՏԻՐՈՋԸ – BDB 610, KB 658, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ
3. չի փնտրում ՏԻՐՈՋԸ – BDB 205, KB 233, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
4. ենթադրում է, որ Աստված չկա – «չկա» BDB 34 II, «Աստված» BDB 43 (արտահայտությունը ԲԱՅ չունի), տես՝ Սաղմ. 10:5ա, 11, 14:1, 53:1, սա փիլիսոփայական խնդիր չէ, այլ գործնական: ՀՄԱ-ում յուրաքանչյուր մարդ հավատում էր հոգևոր տիրակալությանը: JPSOA թարգմանում է այս արտահայտությունը որպես «Աստծուն պետք չի/ չի մտահոգվում»:

10:3ա Ծննդոց 3-ի անկումը արարվածների սրտերը հեռացրել է Արարչից: Մենք մեր կյանքն անց ենք կացնում եսասիրական բաների, պաշտոնների և իշխանության համար: Օգոստինոսը շատ ճիշտ էր արտահայտվում գրելով յուրաքանչյուր մարդկային էակի մասին, որ ստեղծվել են Աստծուց դրված մի դատարկությամբ: Ոչ ոք և ոչինչ չի կարող լցնել այդ դատարկությունը, բացի Աստծուց, սակայն մեղավոր մարդկությունը փորձում է այն լցնել ժամանակավոր՝ երկրավոր բաներով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 10:5-11

- ⁵Նրա ճանապարհները միշտ խիստ են .
Քո դատաստանները բարձր են նրա աչքից,
Նա իր բոլոր թշնամիների վրա գոռոզություն է բանեցնում:
⁶Իր սրտի մեջ ասում է. «Ես չեմ սասանվի,
Եվ երբեք փորձանքի մեջ չեմ ընկնի»:
⁷Նրա բերանն անեծքով ու նենգությամբ ու կեղծիքով է լեցուն .
Անիրավությունն ու ունայնությունը նրա լեզվի տակ են,
⁸Գյուղերում նա դարանակալում է,
Ծածուկ տեղերում անմեղին է սպանում,
Նրա աչքերը թաքուն աղքատներին է դիտում:
⁹Դարանակալում է գաղտնի տեղերում, ինչպես առյուծն իր որջում .
Դարանակալած նստում է՝ աղքատին որսալու համար .
Աղքատին կողոպտում է իր որոգայթը գցելով նրան .
¹⁰Կծծկված պառկում է, իրեն խոնարհեցնում,
Որպեսզի աղքատներն իր գորեղների կողմից ընկնեն:
¹¹Իր սրտի մեջ ասում է. «Աստված մոռացել է
Ու Իր երեսը ծածկել է, Նա երբեք չի տեսնի»:

10:5-11 Այս պարբերությունը նկարագրում է կյանքի թվացյալ անարդարությունը: Ամբարիշտները բարգավաճում են, իսկ արդարները՝ չարչարվում: Այս նույն խնդրին անդրադառնում է Հորի գիրքը, Սաղմոս 73-ը, և Ամբակում մարգարեն: Ամբարիշտները բնութագրվում են որպես՝

1. բոլոր ժամանակներում բարգավաճում են – ԲԱՅԸ (BDB 298 II, KB 311, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) բառացի «հաստատ լինել» է, սակայն կիրառված է հարստության այս իմաստով, տես՝ Ծննդ. 34:29, Թվոց 31:9, 2 Օր. 8:17, 18, Հոր 5:5, 15:29, 20:15, 18, 31:25, Սաղմ. 49:6, 10, 62:10, 73:12, Ես. 8:4, 10:14, 30:6, 60:5, 61:6, Միքիա 4:13:
2. փնչացնում է իր հակառակորդների վրա – BDB 806, KB 916, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, այս նշանակությունը կարելի գտնել միայն այստեղ, սակայն բառն ինքնին հաճախ է կիրառվում Առակացի մեջ խաբերանների համար (տես՝ Առակ. 6:19, 14:5, 25, 19:5, 9):
3. Ես չեմ սասանելու – BDB 556, KB 555, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ, որը նշանակում է, որ բարգավաճման և ապահովության իմ իրավիճակը երբեք չի փոխվելու:

4. նրա բերանը լեցուն է (այսինքն՝ բերանը արտացոլում է սիրտը. Պողոսն այս համարը մեջբերում է ՀԿ-ի տեքստերից իր պատգամի համար, որը հայտնում է մարդկային մեղքի համընդհանուր լինելը, տես՝ Հռոմ . 3:14):
 - ա. անեծքներ
 - բ. նենգություն
 - գ. ճնշումներ
 - դ. անիրավություն
 - ե. ունայնություն
5. նա դարանակալ է լինում անմեղի համար, ինչպես մի գիշատիչ գազան (տես՝ Սաղմ . 10:8-10, Ողբ . 3:10-11)
6. նա հավատում է և պնդում սաղմոսերգուի հենց այն խոսքերը, որոնք գրված են Սաղմ . 10:1-ում: Աստված չի տեսնում՝ բացակա է և անտեղյակ: Սաղմոսերգուի խոսքերը հավատքի աղաղակ էր, սակայն սրանք անհավատի մասին պնդումներն էին (տես՝ Սաղմ . 39:1-2):

10:5բ Պոեզիայի այս տողը վերաբերում է Աստծուն, որպես հեռու և անտեղյակ (տես՝ Սաղմ . 10:4բ, 11):

10:8 «գյուղեր» Սա կարծես թե չի համապատասխանում համատեքստի հետ: NJB թարգմանությունը փոխում է ձայնավորները դարձնելով «եղեգների» (UBS Տեքստային Նախագիծը, էջ՝ 174, տալիս է «գյուղ» բառին “B” գնահատական, որը նշանակում է «որոշ չափով կասկածելի»): NET Աստվածաշունչը թարգմանում է այն որպես «գյուղերի մոտ» (MT «գյուղերում»):

NASB, REB	«դժբախտ»
NASB լուսանցքում	«աղքատ»
NKJV, NRSV	«անօգնական»
JPSOA	«անբախտ»
LXX	«կարիքավոր»

Այս ԱԾԱԿԱՆԸ (BDB 319, KB 319) Սաղմոսներում հանդիպում է միայն այս գլխում, և ամբողջ ՀԿ-ում միայն երեք անգամ: Կարծում են բոլոր երեք կիրառությունները վերաբերում են հարձակման տակ գտնվող անձի:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 10:12-15

¹²Ելի՛ր, ո՛վ ՏԵՐ, ո՛վ Աստված, ձեռքդ վե՛ր բարձրացրու,
Մի՛ մոռացիր խոնարհներին:

¹³Ինչո՞ւ է ամբարիշտը անարգում Աստծուն .
Իր սրտում ասում է. «Դու դա չես պահանջելու»:

¹⁴Դու տեսար *դա*, քանի որ նայում ես անիրավության ու չարախնդությանը,
Որպեսզի Քո ձեռքով հատուցես:

Աղբատը Քեզ է հանձնում իրեն . որբի օգնականը Դու ես:

¹⁵Կոտրի՛ր ամբարշտի ու չարի բազուկը,
Ի հայտ բեր նրա անօրենությունը, մինչև այլևս ոչինչ չգտնվի:

10:12 Այս համարը նկարագրում է գիշատիչ կենդանու գաղտագողի (*Qere*) որս փնտրելը:

10:12-15 Սա Աստծուն գործելու համար ուղղված աղոթք է:

1. Ելի՛ր - (BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) Քո գահից կամ որպես Գերբնական Պատերազմող
2. ձեռք վե՛ր բարձրացրու – BDB 669, KB 724, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

3. մի՛ մոռացիր խոնարհներին – BDB 1013, KB 1489, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով*, տես՝ Սաղմ. 9:12 և 19 հակադրված Սաղմ. 10:11-ին:
4. կոտրի՛ր ամբարշտի բազուկը – BDB 990, KB 1402, *Qal ՀՐԱՄԱՅԱԿԱՆ* (այսինքն՝ կոտրիիր այս չար մարդկանց գորությունը)
5. ի հայտ բեր – BDB 205, KB 233, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով* Սաղմոսերգուն ուզում է, որ Աստված գործի հավատարիմ հավատացյալի օգտին՝ ցույց տալու անհավատին իր հիմարությունը:

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 10:16-18
¹⁶ՏԵՐԸ հավիտյանս հավիտենից Թագավոր է:
Հեթանոսները կորել են նրա երկրից:
¹⁷ՏԵՐ, Դու լսեցիր խոնարհների ցանկությունը,
Դու կհաստատես նրանց սրտերը, Դու կունկնդրես *նրանց*,
¹⁸Որպեսզի որբի ու ճնշվածի դատը տեսնես,
Որ երկրից *եղող* մարդն այլևս չճնշի:

10:16-18 Այս պարբերությունը հաստատում է Իսրայելի Արարիչ, Ազատագրող Աստծո բնավորությունը:

1. ՅԱՀՎԵՆ հավիտյանս հավիտենից Թագավոր է (տես՝ Ելից 15:18, Սաղմ. 9:7, 29:10, 146:10, Երեմ. 10:10, Ողբ 5:19): «Հավիտյան» բառի համար տե՛ս Հատուկ Թեմա. Հավիտյան:
2. ՅԱՀՎԵՆ իսրայելացիներին տվեց Քանանի երկիրը (տես՝ Ծննդ. 15:12-21): Շեշտադրումը «ազգերի» վրա վերադառնում է Սաղմ. 9:17-20-ից մտքին:
3. ՅԱՀՎԵՆ լսում և գործում է խոնարհ՝ աղքատ հավատացյալի համար (նկատե՛ք ՎԱՂԱԿԱՏԱՐԸ, ՅԱՀՎԵՆ լսում է և լսելու է):
4. ՅԱՀՎԵՆ գործում է սոցիալապես թույլերի և խոցելիների օգտին (այսինքն՝ արտացոլում է 2 Օրինացը):
5. ՅԱՀՎԵՆ երկրի վրայից վերացնելու է ամբարտապան անհավատին և նրա գործեր: Տե՛ս ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք Սաղմ. 10:4 նկարագրում է աթեիստին:
2. Ի՞նչ է պնդում Սաղմ. 10:6-ի անձը:
3. Ի՞նչ է պնդում Սաղմ. 10:11 և 13-րդ անձը:
4. Ինչպե՞ս է Սաղմ. 10:18 կապված 2 Օրինացի հետ: